

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----„ ----- 2016թ.

„-----„ ----- 2016 թ.

(արձանագրություն №)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

„ՀԱՍՈՒՆ ՀԱՍԿ” ԹԵՐԹԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սույն կանոնադրությունը որոշում է „Հասուն հասկ” թերթի կազմակերպման, տնտեսական, իրավական և սոցիալական գործունեության հիմնադրությունները:

Գ Լ ՈՒՄ Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. „Հասուն հասկ”-ը ՀԱԱՀ-ի պաշտոնաթերթն է:
2. „Հասուն հասկ” թերթը ՀԱԱՀ-ի (հետագայում՝ հիմնադիր) կողմից հիմնադրված լրատվական միջոց է, որն իր գործունեության ընթացքում ղեկավարում է „Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին” ՀՀ օրենքով, ՀՀ գործող օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությունով:
3. „Հասուն հասկ” թերթը հիմնադրի սեփականությունն է, չունի ինքնուրույն հաշվարկային հաշիվ, կնիք, դրոշմակնիք և իրավաբանական անձի այլ անհրաժեշտ ռեկվիզիտներ:
4. Թերթը թողարկվում է հայերեն (առանձին նյութեր՝ ռուսերեն, անգլերեն) լեզվով:
5. Թերթը ունի գրական „Հունձք” հավելված, որը լույս է տեսնում ուս.տարվա վերջում:
6. Խմբագրության հասցեն՝ Երևան, Տերյան 74, հեռ. 58-34-52:
7. Հասցեի կամ հեռախոսահամարի փոփոխման դեպքում խմբագրությունը պարտավորվում է այդ մասին հինգ օրվա ընթացքում տեղյակ պահել ՀՀ արդարադատության նախարարությանը:

8. Թերթն իր գործունեությունը սկսում է միայն ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվելուց հետո և պատասխանատվություն է կրում „Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին” ՀՀ օրենքի 6, 20, 21 հոդվածների կատարման համար:

ԳԼՈՒԽ Բ

„ՀԱՍՈՒՆ ՀԱՄԿ” ԹԵՐԹԻ ՆՊԱՏԱԿՆ Ու ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Թերթը նպատակ ունի տպագիր խոսքի միջոցով, օգնել ռեկտորատին, համալսարանի հասարակական կազմակերպություններին և դասախոսական անձնակազմին՝ ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերում, ուսանողությանը, հասցնել ուսուցման նոր մեթոդները, ապահովել բուհի ղեկավարության, կոլեկտիվի և ուսանողության միջև կապը:
2. Թերթի խնդիրն է համալսարանի խորհուրդներում, ռեկտորատում քննարկվող կարևորագույն հարցերի հանրայնացումը, դրանց շուրջ անհրաժեշտ կարծիքի ձևավորումը և ընդհանուր տեղեկատվության ապահովումը:
3. Թերթը պարտավոր է մամուլի ազատության ամրապնդման և զարգացման համար առաջնորդվել հավասարության, մարդասիրության, տարակարծության, հանդուրժողականության սկզբունքներով. օժանդակել հրապարակայնությանն ու ժողովրդավարությանը, մտքի, խոսքի, բազմակարծության ազատությանը:

ԳԼՈՒԽ Գ

ԹԵՐԹԻ ԴԵԿԱՎԱՐՈՒՄԸ

1. Թերթը ղեկավարում է հիմնադրի կողմից նշանակված գլխավոր խմբագիրը, որն իրականացնում է թերթի նպատակները ու խնդիրները:
2. Թերթի խմբագիրը իրավունք ունի՝
 - ա) հիմնադրի լիազորությամբ հանդես գալ պետական իշխանության, կառավարման և դատական մարմիններում,
 - բ) լրագրողի համաձայնությամբ խմբագրել նրա կողմից ներկայացված նյութերը ու տեղեկությունները,
 - գ) հանձնարարություններ տալ լրագրողներին,

դ) կազմել խմբագրական խորհուրդ և նախագահել խորհրդի նիստերում:

3. Թերթի խմբագիրը պարտավոր է՝

ա) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները,

բ) պահպանել հեղինակային իրավունքի մասին ՀՀ օրենսդրության պահանջները,

գ) չթողարկել ՀՀ պետական գաղտնիք պարունակող, պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող, պոռնկություն, թմրամոլություն և քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող, կեղծ և չստուգված լրատվություն:

դ) առանց լրագրողի համաձայնության՝ չթողարկել իր կողմից խմբագրված կամ փոփոխված նյութերը:

ե) անհրաժեշտ դեպքում տալ հերքում կամ շահագրգռված քաղաքացիներին ու կազմակերպություններին թույլատրել հանդես գալ պատասխաններով:

ԳԼՈՒԽ Դ

ԼՐԱԳՐՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Լրագրողը հիմնադրի հետ աշխատանքային պայմանագիր կնքած կամ նրա կողմից լիազորված անձ է, որը իր իրավասություններին համապատասխան հավաքում, պատրաստում կամ խմբագրում է նյութեր թերթի համար:

2. Լրագրողն իրավունք ունի՝

ա) հավաքել և հրապարակել նյութեր և տեղեկություններ,

բ) չստորագրել իր նյութը, եթե այն աղավաղված է խմբագրի կամ խմբագրության կողմից,

գ) ունենալ ծածկանուն:

Արգելվում է խանգարել լրագրողին՝ իր մասնագիտական պարտականությունները կատարելիս:

3. Լրագրողը պարտավոր է՝

ա) ղեկավարվել ՀՀ գործող օրենսդրությամբ, թերթի կանոնադրությամբ:

բ) տալ ստուգված և հավաստի լուրեր,

գ) եթե լուրը հրապարակվում է առաջին անգամ, օրենսդրությամբ սահմանված կարգով նշել տեղեկատուն,

դ) խմբագրին տեղյակ պահել չստուգված փաստերի և այն տեղեկությունների մասին, որոնց հրապարակումը կարող է խախտել „Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

ԹԵՐԹԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Թերթի միջոցները գոյանում են հիմնադրի կողմից ներդրված միջոցներից:
2. Թերթի միջոցները ծախսվում են հիմնադրի հայեցողությամբ կամ նրա կողմից սահմանված կարգով:

ԹԵՐԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Թերթի գործունեությունը կարող է կասեցվել կամ դադարեցվել հիմնադրի կողմից: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, առանձին դեպքերում թերթի գործունեությունը կարող է կասեցվել և դադարեցվել նաև դատարանի որոշմամբ:
2. Թերթի գործունեությունը դադարեցվելուց հետո ողջ գույքը անցնում է հիմնադրին: